

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
9-րդ դասարան

Միրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողություն՝ն և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.«Դուրյանի աշխարհում լճակ կա, և ի՞նչ լճակ: Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները, Դուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք»:

ա)Ո՞վ է այս ասույթի հեղինակը:

1մ

բ)Մեկնաբանի՛ր՝

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,
Նմանիլ չես կրնար դուն
Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն:

1մ.

գ)Պատկերավորման ի՞նչ միջոցներ է օգտագործել հեղինակը:

2մ.

2.ա)Նկարագրի՛ր Հայաստանի անցյալը և ներկան՝ ըստ Ռաֆայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծության:

3մ.

բ)Նույն ժամանակաշրջանի ո՞ր հեղինակի ո՞ր բանաստեղծության հետ կարող ես զուգահեռներ անցկացնել:

2մ.

3.ա)Ե՞րբ է տեղի ունեցել էպոսների միջազգային մրցույթը և ի՞նչ տեղ է գրավել հայ ժողովրդի էպոսը:

1մ.

բ)Ի՞նչ պատվանունի է արժանացել «Սասունցի Դավիթ» էպոսը:

1մ.

գ)Ի՞նչ է անվանել Ե. Չարենցը Սասունցի Դավթին:

1մ.

դ)Ի՞նչ արտահայտություն է գտել էպոսը արվեստի մյուս ճյուղերում(նկարչություն, քանդակագործություն, կինո):

1մ.

4.Ո՞վ է ասույթի հեղինակը. «Քաջերի սեունդները քաջեր են»:

Փորձի՛ր մեկնաբանել և արդիականացնել:

Բնութագրի՛ր ժամանակակից ազգային որևէ հերոսի:

3մ.

5.Մեր ժողովրդի համար ի՞նչ տարեթիվ է 1915-ը:

Ինչպե՞ս ես տեսնում քո հաղթանակը:

Ո՞ր ծաղիկն է դարձել ցեղասպանության խորհրդանշան և ինչո՞ւ:

4մ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

10-րդ դասարան

Միբեյի՝ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողություն՝ և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1. Ո՞ր դարն է կոչվում Ոսկեդար և ինչո՞ւ: 2մ.
- Ըստ քեզ՝ դրանից հետո հայ գրականության ո՞ր շրջանը կարող ենք համեմատել Ոսկեդարի հետ: Հիմնավորի՛ր կարծիքդ: 3մ.
2. Արդարացնո՞ւմ ես արդյոք Շամիրամի սերը. ո՞ր գրողների ստեղծագործություններով կարող ես պատասխանել Շամիրամին:
- Պարտվե՞ց արդյոք Շամիրամը, թե... 3մ.
3. Ինչպե՞ս ես մեկնաբանում Նարեկացու հայացքը մարդու և նրա փրկության խնդրի շուրջ: 2մ.
- Փրկվե՞ց արդյոք մարդը. ինչո՞ւ ենք անընդհատ մեղանչում: 2մ.
- Մարդն ու Աստված՝ ըստ Նարեկացու: 1մ.
4. Ո՞ր բանաստեղծն է սոցիալական քնարերգության սկզբնավորողը: 1մ.
- Ինչի՞ դեմ է բողոքում. ո՞ւմ է դիմում և ի՞նչ է անվանում նրան: 1մ.
- Գրի՛ր համապատասխան օրինակ(ներ): 2մ.
5. Ինչո՞ւ է զղջում Դուրյանը մահից առաջ. ո՞ր բանաստեղծության մեջ է ծառանում Աստծու դեմ և ի՞նչ բառերով: 3մ.
- Տեղեկացրո՛ւ Դուրյանին քո մասին 2-3 նախադասությամբ: 3մ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

11-րդ դասարան

Միբեյի՝ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտիր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի: Հաջողություն՝ և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1. Շարունակիր՝

Գարունը այնքան ծաղիկ է վառել... (2 քառատող)

Կարո՞ղ ես Տերյանի գարնանը հակադրել մի այլ գարուն: 3մ.

2. Ի՞նչ անանձնական սիրո մասին է խոսում Մեծարենցը. ի՞նչ է անվանել նա այդ քերթվածը:

Ի՞նչ շրջասույթներ գիտես Մեծարենցի մասին. նշի՛ր դրանց հիմքերը: 3մ.

3. Որտեղի՞ց էր գալիս Չարենցը և ո՞ր էր գնում. շարունակվո՞ւմ է արդյոք այդ ճանապարհը: Պատասխանի՛ր չարենցյան տողերով:

Գրի՛ր քո սիրած քառատողը «Էլի գարուն կգա» տաղից:

Ի՞նչ շրջասույթ գիտես Չարենցի մասին: 3մ.

4. Ո՞րն է Թումանյանի գլուխգործոցը՝ գրված 1915-ին:

Ինչպե՞ս կմեկնաբանես այն:

Թումանյանի ո՞ր բանաստեղծությունն է հակադրվում դրան:

Գրի՛ր մեկական քառատող: 5մ.

5. Ի՞նչ է երգում Դանիել Վարուժանը 1915-ին. ինչո՞վ կբացատրես դա:

Գրի՛ր որևէ քառատող այդ շարքից: Ինչո՞ւ է Մուշեղ Իշխանը Վարուժանի երգը համարում «գոյատևելու անսահման վճիռ մը»: 4մ.

6. Ինչպե՞ս է Բակունցի հերոսը հնչեցնում կորսված հայրենիքի կարոտը և ո՞ւմ է ժառանգում այն: Ի՞նչ է գրել Չարենցը Բակունցի մասին: 2 մ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

12-րդ դասարան

Միրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ, մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի :Հաջողություն՝ և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Ե՞րբ է գրվել Շիրազի «Բիբլիական» պոեմը:

Կարո՞ղ ես աղերսներ գտնել այլ ստեղծագործությունների հետ:

Ի՞նչ տողով է ավարտվում այն:

3մ.

2.Ի՞նչ է զգում Սահյանը «Հայաստան ասելիս».իսկ ի՞նչ էս զգում դու:

Ներկայացրո՛ւ քո Հայաստանը:

3մ.

3.Ինչպե՞ս է հնչեցնում Սևակը անլռելի զանգը. ո՞վ էր այդ զանգահարը.ի՞նչ զուգահեռ է անցկացնում Սևակը նրա և մի այլ հանճարի միջև: Ի՞նչ շրջասույթ կա այդ մեծի մասին հենց այդ պոեմում:

4մ.

4.Ինչո՞ւ է Կապուտիկյանը իր պոեմը անվանում «Մտորումներ ճանապարհի կեսին»:

Ո՞ր ճանապարհի մասին է խոսքը:

3մ.

5.Ինչո՞ւ է Մաթևոսյանը իր վիպակը անվանել «Աշնան արև»:

Ո՞րն է հերոսուհու հավատամքը: Կ՞ա նմանատիպ կերպար հայ գրականության մեջ:

Արդարացնո՞ւմ ես Ադունի մարտականությունը.եթե կարող ես բնութագրիր մաթևոսյանական բառերով:

3մ.

6. 60-70-ականների հայ և օտարագիր արձակում ո՞վքեր են անդրադարձել ցեղասպանության թեմային: Գրիր գրողների և նրանց ստեղծագործությունների անունները:

4մ.

